

ԹԻԱՊԱՐՏՆԵՐԸ

Պատերազմ է հրռչակուած: Թընդանօթի մը պողպատ
 Ծանըր սայլին լըծեր են թիապարտներ մերկիրան.
 Անհեթեթ բեռը պետք է մինչեւ գագաթը տանին.
 Սա դիմացի խրոխտ լերան՝ որ իր գլուխն է մըխըրճեր
 Կապոյտին մէջ արեւոտ՝ իբրեւ հալած կապարի:
 Անկէ ո՛չ եզ, ո՛չ գոմէշ ելաւ, եւ ո՛չ ալ ջորին.
 Սեպերէն վար սահեցան պճեղներն անոնց կըրկնաճիղ.
 Ծալլըւեցան ուժասպառ եւ դողահար ծունկերնին,
 Կամ թէ երբուճը անոնց յանկարծակի պայթեցաւ
 Բուռըն հեւքէն զըսպըւած թոքերնուն մէջ տապահեղծ:
 Եւ արդ մընաց կըրելու հերոսներո՛ւն մըկնագեղ
 Բեռը ձուլուած արիւնով, բեռը մահուամբ ծանրակիր:
 Ետեւէն բիրտ զինուորներ կը մտրակեն անխընայ
 Թիապարտները բոպիկ, մերկ կըռնակով, գըլխեբաց,
 Որոց մարմինն՝ որ ուներ անբըծութիւն մարմարի,
 Այսօր թուխ է իբրեւ պղինձ քուրայ մը միշտ հըրամերձ:
 Կը տոչորէ անդադար սեւցած հըզօր ծոծրակնին
 Ամրան արեւն ու յանկարծ կը կեցընէ, կը խըմէ
 Քըրտինքի շիթ մը մարգրիտ՝ ողնաշարնէն վար սահող...
 Վե՛ր վե՛ր. Փոկերը ճարպոտ դժնէ հարուած մըտրակին
 Կը շառաչեն կըռնակնուն, մէջքերնուն շուրջ կ'ոլորտին,
 Եւ ուսերնէն վար մինչեւ պորտերն անոնց սողալով՝
 Կը գալարուին լըզուըմտող օձերու պէս քըստմնելի.
 Եւ թողած հետքը կապոյտ, կաղապարով խոտորնակ,
 Կամաց կամաց կը սկըսի արեան ծիլեր դուրս բըխել:
 Յոլա՛յ, վե՛ր, վե՛ր: Ու պարանը անճոռնի, հաստաբեստ,
 Մարմինն իրենց կը պըրկէ, միսերնուն մէջ կը թաղուի.
 Նեարդներու բեկտումին, ոսկորներու փըշըրման